

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ**

**ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՆԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՊԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՆԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԻՆՄԱՆ ՆԱՄԱՐ ՆԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՆԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» 2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՎԵՄԲԵՐԻ 6-Ի ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 ապրիլի 2011թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոյությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Նովիանիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «Նավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների իրավապահ մարմինների եւ հատուկ ծառայությունների զինման համար հատուկ փեխնիկայի եւ հատուկ միջոցների մատակարարումների արտոնյալ պայմանների մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 11.03.2011թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ Նայասրանի Նանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության փնտրանի առաջին փեղակալ Ռ. Նարությունյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Նավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների իրավապահ մարմինների եւ հատուկ ծառայությունների զինման համար հատուկ փեխնիկայի եւ հատուկ միջոցների մատակարարումների արտոնյալ պայմանների մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունն ստորագրվել է 2010 թվականի դեկտեմբերի 10-ին՝ Մոսկվայում: Արձանագրությամբ նախատեսվում է «Նավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների իրավապահ մարմինների եւ հատուկ ծառայությունների զինման համար հատուկ փեխնիկայի եւ հատուկ միջոցների մատակարարումների արտոնյալ պայմանների մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի համաձայնագրի 3-րդ հոդվածի, 6-րդ հոդվածի երկրորդ եւ չորրորդ պարբերությունները «ազատ փոխարկվող արժույթով» բառերից հետո լրացնել «եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության ռուբլով» բառերով:

2. Արձանագրությունն ուժի մեջ է մտնում վերոնշյալ համաձայնագրի 14-րդ հոդվածով սահմանված կարգով՝ Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին չորրորդ գրավոր ծանուցումը «Նավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության քարտուղարության սրանալու օրվանից:

3. Արձանագրությունը կատարված է ռուսերեն՝ մեկ բնօրինակով: Բնօրինակը պահվում է «Նավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության քարտուղարությունում, որն արձանագրությունն ստորագրած յուրաքանչյուր պետության կողմից դրա վավերացված պատճենը:

4. Արձանագրության մեջ ամրագրված դրույթները համահունչ են ՏՏ Սահմանադրության 8.2-րդ եւ 9-րդ հոդվածներին եւ բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «Նավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների իրավապահ մարմինների եւ հատուկ ծառայությունների զինման համար հատուկ փեխնիկայի եւ հատուկ միջոցների մատակարարումների արտոնյալ պայմանների մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՏՈՂ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

8 ապրիլի 2011 թվականի  
ՍԴՈ-949